

ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ
Private & Investment Banking



ARMSWISSBANK
Private & Investment Banking

2015

Տարեկան
հաշվետվություն
ANNUAL REPORT

ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ
Private & Investment Banking



ARMSWISSBANK
Private & Investment Banking





Բովանդակություն

TABLE OF CONTENTS

9	Բանկի գործադիր սնօրենի ուղերձը MESSAGE OF THE EXECUTIVE DIRECTOR
15	Բանկի գործունեության հիմնական ուղղությունները MAIN ACTIVITIES OF THE BANK
19	Վարկավորում LENDING
25	Ֆակտորինգ և առևտրի ֆինանսավորման գործիքներ FACTORING AND TRADE FINANCE
29	Ներդրումային բանկային ծառայություններ INVESTMENT BANKING SERVICES
37	Մարքեթինգ MARKETING
39	Տեղեկատվական տեխնոլոգիաներ INFORMATION TECHNOLOGIES

- 43 | Ռիսկերի կառավարում
RISK MANAGEMENT
- 45 | Ներքին հսկողություն եվ աուդիտ
INTERNAL AUDIT
- 49 | Անձնակազմի կառավարման
քաղաքականություն
HUMAN RESOURCE MANAGEMENT
- 53 | Ֆինանսական արդյունքներ
FINANCIAL RESULTS
- 56 | Անկախ աուդիտորի եզրակացություն
և Ֆինանսական հաշվետվություններ
INDEPENDANT AUDITORS REPORT
- 68 | Օգտակար տեղեկատվություն Բանկի մասին
OTHER USEFUL INFORMATION ABOUT THE BANK
- 70 | Բանկի արտասահմանյան թղթակից
բանկերի ցանկը
FOREIGN CORRESPONDENT BANKS



Քութահյայի և Իզնիկի ավանդույթներով ոգեշնչված հայկական խեցիներ

ARMENIAN CERAMICS INSPIRED
BY KUTAHYA AND
IZNIK TRADITIONS

Նախագծի նախաձեռնողն է Գյումրիում Իտալիայի պատվով հյուպատոս, «Յոգ ընտանիքին» և «Գյումրու ընկերներ» հիմնադրամների նախագահ Անտոնիո Մոնտալտոն:

Անտոնիո Մոնտալտոն՝ մասնագիտությամբ բժիշկ, առաջին անգամ Հայաստան է եկել 1989 թվականին՝ 1988 թվականի երկրաշարժից հետո մարդասիրական ծրագրերի շրջանակներում: Այդ ժամանակվանից առ այսօր, ինչպես ինքն է ասում, սկսվել է իր գեղեցիկ արկածը Հայաստանում:

Այս արկածն իր մեջ ներառում էր նաև առողջապահության ոլորտում մի քանի տարվա աշխատանք Հայաստանում և Լեռնային Ղարաբաղում: Այնուհետև, շարունակելով իր գործունեությունն առ այսօր, հիմնում է ինքնաֆինանսավորվող կազմակերպություն՝ հիմնականում Գյումրիում տարբեր ծրագրերի իրականացման նպատակով:

Ծրագրերն իրականացվում են մասնավորապես զբոսաշրջության ոլորտում ինտեգրված սոցիալական բիզնեսի, այն է՝ երեք բուտիկ հյուրանոցների Վիլա Դելենդայի, Վիլա Այգեդորի և Վիլա Կարսի միջոցով: Օրինակ, Վիլա Կարսը փորձ էր «Գյումրու բակ» հին պատմական գաղափարի վերականգնման: Ինչպես մնացած բոլոր նախագծերը, այս մեկը նույնպես, նպատակաուղղված է վերականգնել հայկական հարուստ մշակութային ավանդույթները:

«Քութահյայի և Իզնիկի ավանդույթներով ոգեշնչված խեցիներ» նախագծի նպատակը ևս խեցեգործության ձեռագործ արվեստի վերածնունդն է, որը զարգացրել էին Թուրքիայի հայերը 15-16-րդ դարերում Քութահյա և Իզնիկ քաղաքներում:

Սա կենսալից ծրագիր է: «Գեղեցկություն» է նախագծի խորհրդանիշը: Եվ երբ խորհրդանիշը մասն է մարզի և քաղաքի զարգացման, ջանքերն ամբողջովին ուղղվում են «գեղեցիկը» ստեղծելուն:

Այս նախագիծն ունի մեծ սոցիալական շարժառիթ Գյումրի քաղաքի համար, որը ավերվել է կործանիչ երկրաշարժից: Մեր նպատակն է ներդրում ունենալ տնտեսական զարգացման գործում և ստեղծել աշխատատեղեր մի քաղաքում, որը նախկինում հայտնի էր որպես «Վարպետների քաղաք»:

The project is initiated by Antonio Montalto, Honorary Consul for Italy in Gyumri, President of Family Care and Friends of Gyumri Foundations.

Antonio Montalto, a doctor by profession, came to Armenia first in March, 1989, after the earthquake of 1988, in the frames of humanitarian projects. From then up to now, according to his words “has started his beautiful adventure in Armenia”.

This adventure included several years of works in health sphere in Armenia and Nagorno Karabakh. Then continuing its activities till nowadays, founded a self-sufficient organization that carries out various projects, especially in Gyumri.

The projects are carried out through its integrated in tourism sector social-businesses, i.e. managing three boutique hotels: Villa Delenda, Villa Ayghedzor and Villa Kars. For example, Villa Kars was an attempt to restore the concept of an old historic “Gyumri Yard”. This project like the others is orientated to give a rebirth to Armenian rich cultural traditions.

The “Ceramics inspired by Kutahya and Iznik traditions” is a project again directed to revive the ceramic handicraft culture that was so developed by Armenians in Turkey, starting from 15-16cc in Kutahya and Iznik cities.

It is a life project. “The Beautiful” is the symbol of this project. And when the symbol is part of the development of a region and a city, all the efforts are worth to create “The Beautiful”.

This project has a strong social motivation for Gyumri city, devastated by the terrible earthquake. Our objective is to have an input on economic development and job place creation in the city once famous as a “City of Masters”.



Բանկի գործադիր սնօրենի ուղերձը

MESSAGE OF THE BANK'S
EXECUTIVE DIRECTOR



Հարգելի տիկնայք և պարոնայք

Ինչպես հայտնի է, 2015թ.-ը սկսվեց անբարենպաստ մակրոմիջավայրով, երբ տնտեսական ակտիվության ցուցանիշների նվազումը զուգորդվում էր ՀՀ դրամի հետագա արժեզրկման ճնշումների չեզոքացմանն ուղղված ՀՀ կենտրոնական բանկի կողմից կոշտ դրամավարկային քաղաքականության իրականացմամբ: Թեև Բանկը շուրջ 13%-ով թերակատարեց 2015թ.-ի համար պլանավորված զուտ շահույթի մեծությունը, այնուամենայնիվ, ստեղծված տնտեսական բարդ իրավիճակում Բանկին հաջողվեց 2015թ.-ի գործունեության արդյունքներով ձևավորել ավելի քան 1.9 մլրդ ՀՀ դրամի զուտ շահույթ՝ համակարգում զբաղեցնելով հինգերորդ տեղը:

Իր գործունեության ընթացքում Բանկը միշտ կարևորել է ֆինանսական ցուցանիշների որակական մասը՝ համակարգում զբաղեցնելով առաջատար դիրքեր: Մասնավորապես՝ 2015թ.-ի ROA-ի ցուցանիշով Բանկը զբաղեցրել է համակարգում երկրորդ տեղը, իսկ ROE-ի ցուցանիշով՝ ընդգրկվել առաջին հնգյակում:

Չնայած բանկային համակարգում առկա մրցակցությանը, սերտորեն համագործակցելով միջազգային կազմակերպությունների հետ, Բանկը կարողացավ պահպանել իր կողմից առաջարկվող պրոդուկտների գծով մրցակցային պայմանները և ներգրավել նոր հաճախորդներ:

2015թ.-ին Բանկը վերանայել է իր կողմից մատուցվող ծառայությունների որակը և ապահովել է մատուցվող ծառայությունների քանակական աճ, ինչպես նաև մշակել և ներդրել է նոր պրոդուկտներ:

2015թ.-ին Բանկն իր ռազմավարական ծրագրերի իրականացման նպատակով շարունակել է սերտ համագործակցությունը միջազգային ֆինանսական կազմակերպությունների հետ: Մասնավորապես, հունիսին «Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ»-ի (ՎՋԵԲ-ի) հետ կնքվել է 2 մլն ԱՄՆ դոլար գումարի չափով պայմանագիր՝ «Կովկասի Էներգաարդյունավետության ծրագրի» շրջանակներում: 2015թ.-ին սկիզբ է դրվել նոր համագործակցության «Եվրոպական ներդրումային Բանկ»-ի հետ, գյուղատնտեսության և զբոսաշրջության

Dear Ladies and Gentleman,

2015 began with an unfavorable macroeconomic environment, when reduction of economic activity level was accompanied with Central Bank's solid performance of monetary policy to neutralize further devaluation of the currency. Although in 2015 the Bank underperformed planned net profit with 12.7%, still formed more than AMD 1.9 billion net profit in the current difficult economic situation and took the 5-th place in the system.

The Bank has always prioritized the quality of financial indicators occupying leading positions in the system. Mainly in 2015 the Bank was at the 3rd place in the system with ROA indicator, and was included in top 5 with ROE indicator.

Despite the competition in the banking system, in close cooperation with international organizations, the Bank was able to offer competitive terms of products and attract new customers.

In 2015 the Bank reviewed the quality of its services and increased their quantity, as well as designed and introduced new products.

ուրրտում վարկային ծրագրերի շրջանակներում կնքելով համագործակցության պայմանագիր:

Գյուղատնտեսության ոլորտի հաճախորդներին առաջարկվող ծառայությունների տեսականին ընդլայնելու նպատակով 2015թ.-ին Բանկի և «Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամ»-ի (FREDA) միջև կնքվել է համաձայնագիր՝ հաճախորդներին Բանկի հետ համատեղ ծրագրեր առաջարկելու վերաբերյալ:

2015թ.-ին Բանկի կողմից ակտիվ աշխատանքներ են իրականացվել նաև Բանկի սեփականատիրոջ՝ Վարտան Սիրմակեսի կողմից ձեռնարկված «Շիրակի մարզի տնտեսության զարգացմանն ուղղված ներդրումային ծրագրի» իրագործման նպատակով:

Ծրագրի մանրամասների ներկայացման նպատակով հանդիպումներ են տեղի ունեցել ինչպես ՀՀ Կառավարության ներկայացուցիչների և մարզի տեղական ինքնակառավարման մարմինների, այնպես էլ մի շարք պոտենցիալ հաճախորդների հետ:

Ելնելով իր ռազմավարական ծրագրերի իրականացման նպատակներից՝ Բանկը նախատեսում է ավելացնել գործընկեր միջազգային կազմակերպությունների ցանկը, մասնավորապես, 2015թ.-ին աշխատանքներ են տարվել EFSE (European Fund for Southeast Europe) և GGF (Green for growth) հիմնադրամների հետ՝ իրենց կողմից առաջարկվող ծրագրերին միանալու ուղղությամբ:

Հաշվետու տարվա ընթացքում շարունակվել է նաև համագործակցությունը FCI միջազգային ֆակտորինգային ընկերության հետ՝ միջազգային ֆակտորինգի, «Գերմանահայկական հիմնադրամ» ԾԿԳ Հիմնարկի հետ՝ ՓՄՁ վարկավորման և «Վերականգնվող էներգիայի զարգացում», իսկ «Ազգային Հիփոթեքային» և «Բնակարան երիտասարդներին» ՎՎԿ ՓԲԸ-ի հետ՝ հիփոթեքային վարկային ծրագրերի շրջանակներում:

Հաճախորդների թվաքանակի աճին զուգահեռ Բանկը 2015թ.-ին շարունակեց հաճախորդների բարձրորակ սպասարկումը՝ նրանց առաջարկելով ինչպես ավանդական, այնպես էլ հաճախորդների կարիքների բավարարմանն ուղղված այլընտրանքային ծառայություններ:

2015թ.-ին Բանկն էական ձեռքբերումներ է ունեցել նաև ներդրումային գործունեության բնագավառում:

Բանկը շարունակել է իր ակտիվ ներդրումային գործունեությունը՝ պահպանելով պետական պարտատոմսերի շուկայի Գործակալի կարգավիճակը և հանդես գալով որպես իր հաճախորդների կողմից թողարկվող արժեթղթերի մարքեթ-մեյքեր:

2015թ.-ի ապրիլին Բանկն իր գործունեության պատմության ընթացքում առաջին անգամ հանդես եկավ որպես պարտատոմս թողարկող և տեղաբաշխեց 10 մլն ԱՄՆ դոլար ընդհանուր անվանական ծավալով թվով երեք տրանջի պարտատոմս՝ երկու, երեք և հինգ տարի մարման ժամկետներով, համապատասխանաբար 7.5%, 8.0% և 8.5% արժեկտրոններով: Ներկայումս Բանկի պարտատոմսերը

In 2015 the Bank continued close cooperation with international financial organizations in order to implement its strategic objectives. Mainly in June the Bank and European Bank of Reconstruction and Development (EBRD) signed USD 2 billion contract within the scope of Caucasus Energy Efficiency Program, as well as started cooperation with European Investment Bank (EIB) and signed an agreement in frames of Agriculture and Tourism loans program.

In 2015 the Bank signed an agreement with Fund for Rural Economic Development in Armenian (FREDA) to offer joint programs to Bank's customers in order to enlarge the provided services for current customers in agriculture sector.

In 2015 the Bank carried out different kinds of activities to implement the program called "Investment contributing to the development of Shirak region" program initiated by the Bank's owner Mr. Vartan Sirmakes.

The details of the program were discussed with the representatives of Government and regional local authorities, as well as with a range of potential clients.

To realize its strategic plans, the Bank plans to increase the list of international partners, particularly, in 2015 activities were carried out with European Fund for Southeast Europe (EFSE) and Green for Growth (GGF) funds in order to join their programs.

During the reporting year the Bank continued to enhance cooperation with Factors Chain International (FCI) in frames of International factoring, the German Armenian Fund (GAF) within the scope of SME lending and Renewable Energy Development programs and with "National Mortgage" and "Home for Youth" UCO CJSs within the scope of home mortgage programs.

Along with the increasing number of customers, in 2015 the Bank continued providing high quality service by offering not only traditional but also alternative services to meet customers' needs.

In 2015 the Bank had significant achievements in its investment activity area as well.

In 2015 as a result of its continuous vigorous activities in the investment market, the Bank held its status of Government Securities market agent and acted as a market-maker for the securities issued by its customers.

In April 2015, for the first time in its history the Bank acted as issuer and issued bonds in amount of USD 10 mln nominal value by 3 tranches with,

ցուցակված են «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ ֆոնդային բորսայի “Bbond” հարթակում, իսկ պարտատոմսերի ամենօրյա երկկողմանի գնանշումը (մարքեթ-մեյքինգ) իրականացնում է «Արմենբրոկ» ԲԲԸ-ն:

Բանկն առանձնակի ուշադրություն է դարձրել ֆինանսական շուկայում բանկերի, վարկային կազմակերպությունների, ապահովագրական ու ներդրումային ընկերությունների համար որպես միջնորդ օղակ ծառայությունների մատուցմանը՝ առաջարկելով նրանց ծառայություններ ինչպես Հայաստանի Հանրապետության, այնպես էլ միջազգային ֆինանսական շուկաներում՝ հնարավորություն ընձեռելով ներդրումներ կատարելու տարբեր ֆինանսական գործիքներում:

2015թ.-ի վերջին Բանկի սեփականատերերի կազմում տեղի է ունեցել փոփոխություն, մասնավորապես՝ «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ում Վարտան Սիրմակեսին պատկանող բաժնետոմսերն ամբողջությամբ փոխանցվել են իր վերահսկողության ներքո գտնվող «Էյչ-Վի-Էս Հոլդինգ» ՍՊԸ-ին: Եզված փոփոխությունը հիմնականում բխում է պարոն Սիրմակեսի ներդրումային ռազմավարական նպատակներից, որի արդյունքում պարոն Սիրմակեսը շարունակում է մնալ «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի միակ իրական և վերջնական շահառու:

Բանկի գործունեության ընդլայնման, մրցակցային դիրքերն ամրապնդելու և 01.01.2017թ.-ից բանկերի ընդհանուր կապիտալի նվազագույն մեծությունը 30 մլրդ ՀՀ դրամ սահմանելու ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի որոշման պահանջներին Բանկի գործունեության համապատասխանությունն ապահովելու նպատակով «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ն իրականացրել է լուրջ աշխատանքներ: Ներկայումս Բանկի ընդհանուր նորմատիվային կապիտալը կազմում է ավելի քան 30 մլրդ ՀՀ դրամ:

Ավելին, Բանկի բաժնետերերը մտադիր են 2016 թվականի վերջին նորմատիվային ընդհանուր կապիտալը հասցնել 33-34 մլրդ ՀՀ դրամի՝ այդ թվում նաև կանոնադրական կապիտալի համալրման միջոցով:

Մենք մտադիր ենք շարունակել աշխատել նույն եռանդով, խանդավառությամբ և վճռականությամբ՝ հավատարիմ մնալով մեր սկզբունքներին և հետամուտ լինելով հաջորդ տարվա մեր ռազմավարական նպատակների իրագործմանը:

Բանկի անձնակազմի անունից իմ խորին շնորհակալությունն են հայտնում մեր Հաճախորդներին, Գործընկերներին, խորհրդին և Բաժնետերերին՝ Բանկին ցուցաբերած վստահության և աջակցության, ինչպես նաև փոխշահավետ համագործակցության համար:

Ցանկանում եմ իմ վստահությունն ու երախտագիտությունը հայտնել նաև «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ»-ի անձնակազմին՝ պրոֆեսիոնալ և նվիրված աշխատանքի համար:

Գևորգ Մաչանյան
Տնօրինության նախագահ
Գործադիր տնօրեն

two, three and five years maturity and respectively and 7.5%, 8.0% and 8.5% coupons. Now the Bank's Corporate Bonds are listed in “Nasdaq OMX” OJSC stock exchange “Bbond” section, and bonds bilateral daily quotations (market making) are implemented by “Armenbrok” OJSC.

During the reporting year the Bank paid special attention to its mediation services for banks and non-bank financial institutions such as lending, insurance, brokerage companies. In this regard, the Bank offers different products of both RA and international financial markets giving chance to make investments in various financial instruments.

In the end of 2015 there has been changes in the Bank's shareholder structure, particularly, Vartan Sirmakes fully transferred his shares of “ARMSWISSBANK” CJSC to “HVS holding” LTD, which operates under his control. The changes derive from strategic investment goals of Vartan Sirmakes. So, despite the changes in shareholder structure Vartan Sirmakes remains the only and final beneficiary of “ARMSWISSBANK” CJSC.

In order to conform with the requirement set by the Central Bank of RA on rising minimum total capital threshold of the banks up to AMD 30 billion since 01.01.2017, as well as to expand business and strengthen competitive position, the Bank has seriously worked in that direction and now the total regulatory capital of the Bank is more than AMD 30 billion.

It is worth mentioning, that by the end of 2016 the shareholders of the Bank intend to reach the total regulatory capital to AMD 33-34 billion including through replenishing the Bank's statutory capital as well.

We will strive to work with the same energy, enthusiasm and determination, struggling to be true to our principless and pursuing our strategic objectives for coming years.

On behalf of the Bank's staff I would like to express my gratitude towards our Customers, Partners, Board Members and Shareholders for their trust, support and mutually beneficial cooperation.

I would like also to express my trust and gratitude to the ARMSWISSBANK staff for their demonstrated professionalism and commitment.

Gevorg Machanyan
Chairman of the Management Board
Executive Director





Բանկի ղեկավար անձիք

MANAGEMENT OF THE BANK

ԳՐԻԳՈՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

GRIGOR
HOVHANNISYAN

Գործադիր տնօրենի տեղակալ -
Վարկավորման
ղեկարտամենտի տնօրեն

Deputy Executive Director -
Director of Lending Department



ԿԱՐԵՆ ՏՈՒՐՅԱՆ

KAREN
TURYAN

Գործադիր տնօրենի տեղակալ -
Ներդրումային ղեկարտամենտի
տնօրեն

Deputy Executive Director -
Director of Investment Department





ԳԵՎՈՐԳ ԽԱՉԱՏՐՅԱՆ

GEVORG
KHACHATRYAN

Գործադիր տնօրենի տեղակալ -
Հաճախորդների սպասարկման
դեպարտամենտի տնօրեն,

Deputy Executive Director -
Director of Customer
Service Department




ԱՆԺԵԼԱ ԲԱՐՏԵԴՅԱՆ

ANZHELA
BARSEGHYAN

Բիզնեսի զարգացման
դեպարտամենտի տնօրեն

Director of Business
Development Department



ԳՐԻԳՈՐ ՄՈՎՍԻՍՅԱՆ

GRIGOR
MOVSI SYAN

Գործադիր տնօրենի տեղակալ -
Ռիսկերի կառավարման
դեպարտամենտի տնօրեն

Deputy Executive Director -
Director of Risk Management
Department

ՍԵՂՐԱԿ ԲԱԴԴԱՍԱՐՅԱՆ

SEDRAK
BAGHDASARYAN

Գլխավոր հաշվադատի -
Հաշվադատական հաշվառման և
հաշվետվությունների
դեպարտամենտի տնօրեն

Chief Accountant -
Director of Accounting and
Reporting Department







Բանկի գործունեության հիմնական ուղղությունները

MAIN ACTIVITIES OF THE BANK

ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ-ը, հավատարիմ մնալով իր որդեգրած քաղաքականությանը, գործունեությունն իրականացնում է կորպորատիվ և ներդրումային ուղղություններով՝ ներդնելով միջազգային բանկային համակարգում ընդունված փրայվիթ բանկային (Private banking) տեխնոլոգիաները:

Բանկը մշտապես աշխատանքներ է իրականացնում հաճախորդների անհատական կարիքների բացահայտման ուղղությամբ՝ առաջարկելով վերջիններիս բավարարման համապատասխան ֆինանսական լուծումներ:

ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ-ն առանձնանում է կորպորատիվ հաճախորդներին առաջարկվող համալիր ծառայությունների լայն տեսականիով՝ սկսած ավանդական բանկային ծառայություններից (վճարահաշվարկային, վարկային ծառայություններ, դեպոզիտային ձևեր սխեմաներ, առևտրի ֆինանսավորում և այլն) մինչև ժամանակակից բանկային ծառայություններ (այլընտրանքային ֆինանսավորում, ֆակտորինգ, ֆորվարդ, սվոփ, օպցիոն, ֆինանսական խորհրդատվության մատուցում և այլն):

Առևտրի ֆինանսավորումը, ֆակտորինգային ծառայությունները, ինչպես նաև ապրանքային և արտարժույթային ֆյուչերսները հիմնականում ուղղված են արտահանման և ներմուծման ոլորտում գործող հաճախորդներին՝ նպաստակ ունենալով պահպանել նրանց մրցունակությունը տեղական ու միջազգային շուկաներում՝ ընձեռելով նոր շուկաներ ներթափանցելու հնարավորություն:

Remaining loyal to its policy, ARMSWISSBANK conducts its activity in the areas of corporate and investment banking as well as introducing private banking principles accepted in international practice.

ARMSWISSBANK stands out by the wide range of services provided to its corporate clients including both traditional (payment and settlement services, lending services, flexible deposit schemes, trade finance, etc.) and non-traditional services (alternative financing, factoring, forward, swap, option, financial consulting, etc.)

Trade finance, factoring as well as commodity and financial futures are mainly designed for clients engaged in importing and exporting activities to support their competitiveness in local and international markets and facilitate new markets penetration.

One of the Bank's main strategic directions is investment banking complying with international standards. The Bank offers its

Բանկի ռազմավարական ուղղություններից է միջազգային չափանիշներին համապատասխան ներդրումային բանկային ծառայությունների մատուցումը: Բանկն իր հաճախորդներին առաջարկում է ներդրումային գործիքների բավականին լայն տեսականի, ինչպես նաև ամերիկյան, եվրոպական, ռուսական ընկերությունների ու ներդրումային հիմնադրամների բաժնետոմսեր, դեպոզիտար ստացականներ, պետական ու կորպորատիվ պարտատոմսեր, ապրանքային ֆյուչերսներ, օտարերկրյա արժեթղթերով ռեպո մարժինալ գործառնություններ, կանխիկ ու անկանխիկ ոսկով գործառնություններ և այլն:

Ֆինանսավորման ածանցյալ գործիքների միջոցով Բանկի հաճախորդներն արդյունավետ կարող են իրականացնել իրենց ռիսկերի դիվերսիֆիկացումը, ինչպես նաև դրամական հոսքերի կառավարումը:

Ժամանակակից մարտահրավերներին դիմագրավելու, ինչպես նաև ներդրումային նախագծեր մշակելու և իրագործելու համար ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ-ն իր կորպորատիվ հաճախորդներին առաջարկում է արժեթղթերի թողարկման ու տեղաբաշխման կազմակերպման ծառայություններ:

ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ-ը, առաջատար դիրք գրավելով ՀՀ պետական պարտատոմսերի շուկայում և հանդիսանալով ՀՀ պետական պարտատոմսերի շուկայի Գործակալ, իրականացնում է շուկա ստեղծողի (մարքեթ-մեյքեր) գործառնություն՝ նպաստելով արժեթղթերի հայաստանյան շուկայի իրացվելիության բարձրացմանը: ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ-ը ակտիվ մասնակցություն է ցուցաբերել ՀՀ արժեթղթերի շուկայի ֆինանսական միջնորդության ոլորտի օրենսդրական դաշտի բարեփոխումներին վերաբերող նախաձեռնություններին:

Բանկն իր հաճախորդներին առաջարկում է անհատականացված (tailor-made) պրոդուկտների փաթեթ՝ արժեթղթերի անհատական, կոլեկտիվ և այլ տիպի պորտֆելների ձևավորում, բրոքերային ու պահառուական ծառայություններ, ներդրումային գործառնությունների վերաբերյալ խորհրդատվության մատուցում: Ճկունությունը հաճախորդների հետ աշխատելիս կարևոր գործոն է Բանկի առաջանցիկ զարգացման և «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» բրենդի առաջնորդման ապահովման գործում:

customers a wide range of investment instruments, such as stocks of American, European and Russian companies and investment funds, depository notes, government and corporate bonds, commodity futures as well as repo agreements and marginal operations with foreign securities, transactions with gold including metal accounts, etc.

The Bank's clients can improve risk diversification and manage their cash flows more efficiently through derivatives.

In order to cope with the market challenges and to develop new investment projects successfully, ARMSWISSBANK offers underwriting services to its corporate clients.

As one of the leaders in the Armenian government securities market and a government securities agent of RA, ARMSWISSBANK acts as a market maker to enhance liquidity of the Armenian securities market. ARMSWISSBANK continues active participations to initiatives regarding legal reforms of financial intermediation in the RA securities market.

ARMSWISSBANK offers its clients tailor-made services, including development of individual, corporate and other types of securities portfolios, brokerage, custodial and consulting services. The flexibility while working with the clients is one of the key factors for the progressive development of the Bank and promotion of "ARMSWISSBANK" brand.







Վարկավորում

LENDING

Բանկի Խորհրդի կողմից հաստատված վարկավորման քաղաքականության համաձայն՝ Բանկը վարկավորման ժամանակ նախապատվություն է տալիս կայացած կորպորատիվ հաճախորդներին, որոնք ունեն գարգացող բիզնես, բարի համբավ գործարար աշխարհում, կառավարման որակյալ համակարգ, ինչպես նաև ակտիվորեն օգտվում են նաև Բանկի այլ ծառայություններից և գործիքներից:

Իր գործունեության հիմնական ուղղություններից մեկի՝ վարկավորման ուղղությամբ, Բանկը կորպորատիվ հաճախորդներին շարունակում է առաջարկել պրոդուկտների լայն տեսականի:

Մասնավորապես, բիզնեսի ընդլայնման կամ զարգացման նպատակով Բանկն իր հաճախորդներին առաջարկում է փոքր և միջին ձեռնարկությունների, ինչպես նաև խոշոր ընկերությունների համար նախատեսված վարկեր, էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված վարկեր, նախագծերի ֆինանսավորման վարկեր, ինչպես նաև առևտրի ֆինանսավորման գործիքներ:

Բանկի ֆինանսավորման փաթեթը մշտապես համալրվում է նոր և ճկուն գործիքներով, այդ թվում նաև՝ առանց գրավի ֆինանսավորման հնարավորություններով: Մասնավորապես, ներմուծող ընկերություններին առաջարկվում է «Գնման պատվերի ֆինանսավորում» ծառայությունը, որի դեպքում գործարքի հիմնական ապահովություն է հանդիսանում մատակարարման պայմանագիրը, իսկ արտահանողներին առաջարկվում է առանց գրավի ֆինանսավորում կամ միջազգային ֆակտորինգի շրջանակներում, որտեղ որպես ապահովություն է հանդիսանում, ֆակտորինգային միջազգային ասոցիացիայի (FCI)

According to the Bank's lending policy adopted by the Board of the Bank well established corporate clients with steady operating businesses, good reputation and high quality management system, as well as using other products offered by the Bank are given preference over other customers and they benefit from other.

Lending is one of the main activities of ARMSWISSBANK and the Bank provides a wide range of products to its corporate clients.

Mainly, for expanding and developing businesses the Bank offers to its customers loans for small and medium, large enterprises, as well as offers loans increasing energy efficiency, project financing loans, and also trade financing instruments.

Our financing portfolio is always replenished with new and flexible instruments, including financing without collateral. For importers the Bank offers Purchase order financing service, the collateral of which is supply contract. For exporters the Bank offers financing without collateral within the scope of international factoring, the collateral of which is Factors Chain

անդամի երաշխավորությունը, կամ էլ՝ Հայաստանի արտահանման ապահովագրական գործակալության հետ համատեղ պրոդուկտի շրջանակներում, որտեղ որպես գործարքի ապահովություն է հանդիսանում նշված գործակալության կողմից թողարկված ապահովագրական պոլիսը: Ավելին, Բանկը հանդիսանալով Հայաստանի արտահանման ապահովագրական գործակալության հիմնական գործընկեր, աշխատանքներ է իրականացնում նոր պրոդուկտի մշակման ուղղությամբ, այն է, նախաարտահանման գործընթացների ֆինանսավորում առանց գրավի:

Կորպորատիվ հաճախորդներին համապարփակ ֆինանսական ծառայություններ մատուցելու նպատակով Բանկն ապահովում է միջաբանագրային սպասարկման ծառայությունների ու գործիքների շրջանակ, ինչպիսիք են հիփոթեքային վարկավորումը, միկրովարկերը վերանորոգման համար, սպառողական վարկերը և այլ ծառայություններ:

2015թ.-ի վերջի դրությամբ Բանկի վարկային պորտֆելը կազմել է 37.1 մլրդ ՀՀ դրամ: Վարկային պորտֆելի՝ նախորդ տարվա համեմատ գրեթե նույն մակարդակի պահպանումը հիմնականում պայմանավորված է եղել 2015թ.-ի ընթացքում ՀՀ տնտեսությունում տիրող անորոշությամբ, 2014թ.-ի վերջից սկսված ազգային արժույթի կտրուկ արժեզրկմամբ և մակրոտնտեսական միջավայրի վատթարացմամբ: Այդ պատճառով մի կողմից Բանկը վարել է համեմատաբար պահպանողական վարկավորման քաղաքականություն՝ զերծ մնալով վարկային պորտֆելի ավելացմանը նպաստող գործողությունների իրագործումից, մյուս կողմից՝ որոշակի չափով նվազել է վարկային ծառայությունների նկատմամբ վճարունակ պահանջարկը: Հարկ է նշել, որ հիմնականում, վարկային պորտֆելի ծավալը պահպանելով ընթացիկ մակարդակի վրա՝ Բանկը 2015թ.-ի ընթացքում ապահովել է ստացված տոկոսային եկամուտների 4.2 մլրդ ՀՀ դրամ ցուցանիշ, որը նախորդ տարվա համեմատ աճել է գրեթե 18%-ով:

Անհրաժեշտ է նշել նաև, որ Բանկի վարկային պորտֆելի աճին զուգընթաց որոշակի ֆունկցիոնալ փոփոխություններ են կատարվել Վարկավորման դեպարտամենտում՝ իրականացվել է աշխատակիցների գործառնության տարանջատում՝ հաճախորդների հետ հարաբերությունների կառավարման գծով մասնագիտացված կառավարիչների և վարկային ռիսկի վերլուծությամբ զբաղվող վերլուծաբանների: Բացի այդ, որպես նոր կառուցվածքային ստորաբաժանում առանձնացվել է հիփոթեքային ծառայությամբ զբաղվող օղակը:

Ստորև բերված է վարկային պորտֆելի ծավալի և մյուս հիմնական ցուցանիշների վերջին 5 տարվա ընթացքում գրանցված աճի դինամիկան:

International (FCI) member guarantee. There is also a financing instrument designed for exporters with Export Insurance Agency of Armenia (EIA), where the collateral of the transaction is an insurance policy issued by the EIA. Moreover, as the Bank is the main partner of Export Insurance Agency of Armenia (EIA) worked together on designing a new product that will provide pre-export financing without collateral.

For offering comprehensive financial services to its corporate customers, the Bank also offers some retail services and tools, such as mortgage loans, micro financing tools for renovation, consumer loans, etc.

Lending is one of the main operational activities of the bank which provides customers with a wide range of corporate banking services including loans, credit lines, purchase order financing, pre-export financing, project financing, overdrafts, factoring, letter of credit, guarantee, etc. And in order to provide its corporate customers complete and comprehensive solutions for financial services the Bank also provides variety of mass services and instruments, such as mortgage lending, micro financing program for repairing real estate, consumer loans and other services.


At the end of 2015 the loan portfolio amounted to AMD 37.1 billion. Keeping it at the same level as last year resulted from the uncertainty of economy in 2015, depreciation of national currency as well as deterioration of macroeconomic environment. Therefore, the bank had a relatively conservative lending policy, refraining from large-scale operations that support to the realization of the credit portfolio increase. On the other hand, for certain extent the demand for credit services has reduced. It is worth mentioning that maintaining the current level of credit portfolio, the Bank during 2015 got AMD 4.2 billion interest revenue, which has increased by almost 18% compared to the results of previous year.

It should also be noted that along with the growth of the Bank's loan portfolio certain functional changes have been made in lending department; the functions of Customer Relationship Managers and Credit Risk Analysts were separated. Furthermore, a new structural unit was formed responsible for providing mortgage service.

Below are demonstrated the growth of the volume and other basic indicators of loan portfolio during last 5 years.


Վարկային պորտֆելի դինամիկան (մլրդ ՀՀ դրամ)

Dynamics of the loan portfolio (billion AMD)



Վարկային ներդրումներից ստացված տոկոսային եկամուտների դինամիկան (մլրդ ՀՀ դրամ)

Dynamics of interest income on lending activities (billion AMD)



Վարկային ռիսկի կառավարում


Վարկային ռիսկի արդյունավետ կառավարման նպատակով Բանկը մեծ ուշադրություն է դարձնում վարկային պորտֆելի բաշխվածության ըստ տնտեսության առանձին ճյուղերի և ոլորտների՝ նվազեցնելով առանձին ճյուղերում վարկերի կենտրոնացումը: Ստորև ներկայացված է վարկային պորտֆելի բաշխվածությունն ըստ տնտեսության ճյուղերի:

Credit Risk Management

To manage credit risk the Bank always carries out activities and pays particular attention to the diversification of the loan portfolio by the economy sectors decreasing centralization within separate sectors. Below is the loan portfolio distributed by the economy sector.

2015թ. վարկային պորտֆելի բաշխվածությունը՝ ըստ տնտեսության ճյուղերի

2015 Distribution of the Loan portfolio by sectors of the economy



Էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում
Electricity, gas, steam and air conditioning supply

Առևտուր
Trade

Մշակող արդյունաբերություն
Processing industry

Հիփոթեքային վարկեր
Mortgage loans

Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և ձկնորսություն
Agriculture, forestry, fishing

Սպառողական վարկեր
Consumer loans

Տնտեսության այլ ճյուղեր
Other sectors of the economy

Վարկային ծրագրերի շրջանակներում Բանկը ներկայումս համագործակցում է մի շարք միջազգային և տեղական վարկատու կազմակերպությունների հետ, մասնավորապես՝

- «Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկ»-ի հետ՝ ՓՄՁ վարկավորման, Առևտրի ֆինանսավորման և Էներգախնայողության ծրագրերի շրջանակներում,

- «Գերմանահայկական հիմնադրամ»-ի հետ՝ «Վերականգնվող էներգիայի զարգացման ֆինանսավորում», «ՓՄՁ զարգացում» ու «Գյուղի և գյուղատնտեսության զարգացում» ծրագրերի շրջանակներում,

- «Ասիական Զարգացման Բանկ»-ի հետ՝ Առևտրի ֆինանսավորման ծրագրերի շրջանակներում,

- «Պրոմսվյազբանկ»-ի հետ՝ Առևտրի ֆինանսավորման ծրագրի շրջանակներում,

- «Ազգային Հիփոթեքային Ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ-ի հետ՝ հիփոթեքային վարկերի վերաֆինանսավորման ծրագրի շրջանակներում, ինչպես նաև էներգաարդյունավետ վերանորոգման վարկերի և բնակարանային միկրովարկերի շրջանակներում,

- «Բնակարան երիտասարդներին» ՎՎԿ ՓԲԸ-ի հետ՝ հիփոթեքային վարկերի վերաֆինանսավորման ծրագրի շրջանակներում:

Բանկը կարևորում է միջազգային կազմակերպությունների հետ համագործակցությունը՝ մասնակցելով վարկային և առևտրի ֆինանսավորման տարբեր ծրագրերի: 2016թ.-ին Բանկը նախատեսում է զգալիորեն ավելացնել ծրագրային վարկերի պորտֆելը:

Within the scope of loan programs the Bank collaborates with a number of local and international lending organizations, in particular with:

- The European Bank for Reconstruction and Development within the scope of SME lending and trade finance programs,

- German-Armenian Fund, within the scope of “Renewable energy development financing” and “SME development” programs,

- Asian Development Bank within the scope of Trade Finance Programs

- Promsvyazbank within the scope of Trade Finance Programs,

- National Mortgage Company UCO CJSC within the scope of mortgage loan refinancing program, as well as with the program of energy efficiency renovation of houses and housing micro lendings

- Home for Youth UCO CJSC within the scope of mortgage loan refinancing program.

The Bank has always emphasized the importance of the cooperation with international organizations, participating in various programs of credit and trade financing. In 2016 the Bank plans to increase the range of programloans in its portfolio.





Ֆակտորինգ եվ առեվտրի ֆինանսավորման գործիքներ

FACTORING AND TRADE FINANCE INSTRUMENTS

Ֆակտորինգ

Ֆակտորինգային ծառայությունները հանդիսանում են Բանկի գործունեության հիմնական ուղղություններից մեկը: Ինչպես նախորդ տարիներին, այս տարի ևս Բանկը ֆակտորինգային ծառայությունների ոլորտում հանդես է եկել որպես ՀՀ բանկային համակարգի առաջատարներից մեկը՝ առանձնանալով ծառայությունների մատուցման նորարարական լուծումներով և անհատական մոտեցմամբ:

Բանկը մատուցում է ֆակտորինգային ծառայությունների լայն տեսականի, մասնավորապես.

- հետպահանջի իրավունքով (ռեգրեսով) և առանց հետպահանջի իրավունքի (առանց ռեգրեսի) ներքին ֆակտորինգ,
- փակ ներքին ֆակտորինգ,
- միջազգային (արտահանման և ներմուծման) ֆակտորինգ՝ FCI միջազգային ցանցի շրջանակներում,
- ուղղակի արտահանման ֆակտորինգ:

Հաշվի առնելով ՀՀ տնտեսության որոշակի բացասական միտումները և ֆինանսավորման այլ գործիքների համեմատությամբ ֆակտորինգի առավել ռիսկային լինելու հանգամանքը՝ Բանկը, ընթացիկ տարում

Factoring

Factoring is one of the main directions of the Bank's activities. As in previous years, this year the Bank has acted as one of the leaders in the field of factoring services in the banking system, standing out with innovative solutions of services and individual approaches.

The Bank provides wide range of factoring services, mainly,

- recourse and non-recourse domestic factoring,
- non-notification domestic factoring,
- international (export and import) factoring within the scope of FCI network,
- direct export factoring.


Taking into account some negative trends in the economy and more risky factor of factoring in comparison with other financing

ևս, առաջնորդվել է ֆակտորինգային գործարքների իրականացման առավել զսպված քաղաքականությամբ: 2015թ.-ի ընթացքում Բանկի կողմից իրականացված ֆակտորինգային գործարքների ծավալը կազմել է 4.5 մլրդ ՀՀ դրամ՝ պահպանելով նախորդ տարվա մակարդակը:

instruments, the Bank, in 2015 maintained more restrained policy related to factoring transactions. In 2015 the Bank carried out approximately the same volume of factoring transactions as during last year, i.e. in amount of AMD 4.4 billion.

Ֆակտորինգային գործարքների տարեկան ծավալները, մլրդ ՀՀ դրամ

Annual turnover of domestic factoring (billion AMD)



2015թ.-ի ընթացքում Բանկը զգալիորեն խորացրեց ֆակտորինգի շրջանակներում գործող հաճախորդների հետ համագործակցությունը՝ միաժամանակ իրականացնելով նաև նոր հաճախորդների ներգրավում և սպասարկում ֆակտորինգի համար այնպիսի նոր ոլորտներում, ինչպիսիք են առողջապահությունը, ջերմոցային տնտեսությունը, տեքստիլ արդյունաբերությունը, մարքեթինգային ծառայությունները և այլն:

In 2015 the Bank deepened cooperation with existing factoring clients, at the same time attracted new customers from different new sectors for factoring such as health care, greenhouse industry, textile industry, marketing services etc.

Տարվա ընթացքում Բանկը ներգրավել է ֆակտորինգային շուրջ 60 նոր հաճախորդ և դեբիտոր՝ նախորդ տարվա 45-ի համեմատ, ինչը հնարավորություն տվեց բարելավել ֆակտորինգի պորտֆելի դիվերսիֆիկացիան, ապահովել պորտֆելի կայունությունը և հետագա աճը:

During the current year the Bank has attracted over 60 new customers and debtors, instead of 45 that was in 2014, which enabled to improve the diversification of the factoring portfolio, to ensure the stability and further growth of the portfolio.

Առևտրի ֆինանսավորման այլ գործիքներ

Trade finance instruments

Ընթացիկ տարվա ընթացքում Բանկը ակտիվորեն մատուցել է միջազգային առևտրի ֆինանսավորման, հատկապես արտահանման ֆինանսավորման ծառայություններ՝ նպաստելով ՀՀ տնտեսության զարգացման համար արտահանման տեմպերի և ծավալների աճին: Բանկը հաճախորդներին առաջարկում է առևտրի ֆինանսավորման ծառայությունների լայն

During 2015 the Bank actively provided international trade financing products, particularly export financing services aiming to contribute to the increase of pace and volumes of export from Armenia.

The Bank offers its customers a wide range of trade financing products, which are used in different stages of import and export transactions. The provided services are as follows: international

գործիքակազմ, որոնք կիրառվում են արտահանման ու ներմուծման գործարքների տարբեր փուլերում, մասնավորապես՝ միջազգային ֆակտորինգ (արտահանման և ներմուծման ֆինանսավորում), ակրեդիտիվներ, ինկասոներ և միջազգային երաշխիքներ՝ համագործակցելով ինչպես «Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկի» (ՎԶԵԲ) և «Առաջատար ֆակտորինգային կազմակերպությունների ցանցի» (FCI) հետ, այնպես էլ «Ասիական Զարգացման Բանկի» (ԱԶԲ) և «Հայաստանի արտահանման ապահովագրական գործակալության» (ՀԱԱԳ) հետ:

Առևտրի ֆինանսավորման ոլորտում Բանկի ամենաակտիվ գործընկերը շարունակում է մնալ ՎԶԵԲ-ը, որի կողմից առևտրի ֆինանսավորման ծրագրի (ԱՖԾ) համար նախատեսված սահմանաչափը մնացել է անփոփոխ՝ կազմելով 9 մլն ԱՄՆ դոլար: Ընթացիկ տարվա ընթացքում Բանկը ՎԶԵԲ-ի ԱՖԾ-ի շրջանակներում իրականացրել է մոտ 6.7 մլն ԱՄՆ դոլարի չափով գործարքներ՝ նախորդ տարվա 5 մլն ԱՄՆ դոլարի համեմատ:

Ընթացիկ տարվա ընթացքում Բանկը խորացրեց համագործակցությունը նաև Ասիական Զարգացման Բանկի (ԱԶԲ) հետ՝ ակրեդիտիվների և միջազգային երաշխիքների թողարկման ոլորտում, ինչպես նաև բանկային համակարգում առաջին իրականացրեց ՀԱԱԳ-ի հետ համագործակցության շրջանակներում հաճախորդների արտահանման ֆինանսավորում՝ արտահանման ապահովագրության պոլիսի ապահովությամբ:

Ընթացիկ տարվա ընթացքում Բանկը թողարկեց 2 նոր տեսակի ակրեդիտիվ, որոնք մեծ կիրառություն ունեն միջազգային առևտրի ֆինանսավորման ոլորտում: Դրանք են.

- հետֆինանսավորման պայմանով (post financing) ակրեդիտիվներ, ինչը հնարավորություն է տալիս ակրեդիտիվի ավարտին հաճախորդին ֆինանսավորել առավել բարենպաստ պայմաններով, քան գործող այլ ֆինանսավորման ծրագրերի դեպքում,
- հետաձգված վճարման պայմանով դիսկոնտավորվող ակրեդիտիվներ՝ արտասահմանյան առաջատար հաստատող բանկերի միջոցով:

Բանկը հետևողականորեն շարունակելու է խորացնել համագործակցությունը ինչպես արդեն գործող, այնպես էլ նոր գործընկերների հետ: Միաժամանակ, Բանկն աշխատանքներ է իրականացնելու նաև այլ արտասահմանյան բանկերի հետ համագործակցության հաստատման ու սահմանաչափերի ստացման նպատակով՝ առևտրի ֆինանսավորման պրոդուկտների առաջնղման և հաճախորդներին ֆինանսավորման առավել բարենպաստ ու մրցակցային պայմաններ առաջարկելու համար:

factoring (export and import financing), letters of credit, collections and international guarantees, which the Bank offers in cooperation with European Bank of Reconstruction and Development (EBRD) and FCI (Factors Chain International) leading factoring company, as well as with Asian Development Bank (ADB) and Export Insurance Agency of Armenia (EIA).

The most active partner of the Bank remains EBRD with USD 9 million unchanged limit for Trade Facilitation Program (TFP). During the current year, the Bank implemented about USD 6.7 million transactions within the scope of EBRD Trade Facilitation Program, instead of last year's USD 5 million.

During the current year the Bank has deepened the cooperation with Asian Development Bank (ADB) within the scope of issuance of letters of credit and international guarantees, as well as the Bank was the first in the banking system of RA to implement export financing backed by Export Insurance Agency of Armenia (EIA) insurance certificate.

In 2015 the Bank carried out approximately the same volume of factoring transactions as during last year, i.e. in amount of AMD 4.4 billion.

- post financing letters of credits, which gives an opportunity to finance the customer at the end of letter of credit with more favorable terms than other existing financing programs,
- discounted letters of credit with deferred payment term by leading foreign banks.

The Bank will continuously develop the cooperation not only with its already existing partners but also with new ones. At the same time the Bank will try to cooperate with other foreign banks, get limits from them to develop and promote its products, as well as to offer customers more favorable and competitive financing services.





Ներդրումային բանկային ծառայություններ

INVESTMENT BANKING SERVICES

Կորպորատիվ արժեթղթերի տեղաբաշխումներ

2015թ.-ի ընթացքում Բանկը, որպես Հաշվի օպերատոր, շարունակել է նոր հաճախորդների ներգրավման, ինչպես նաև գործող հաճախորդներին ծառայությունների էլ ավելի ընդգրկուն փաթեթ առաջարկելու գործընթացը: 2015թ.-ի ընթացքում Բանկը ռեեստրի վարման պայմանագիր է կնքել թվով 12 թողարկողի հետ (որից 6-ը՝ պարտատոմսերի ռեեստրի վարման գծով), իսկ պահառության պայմանագիր՝ թվով 28 հաշվետիրոջ հետ:

2015թ.-ի ապրիլ ամսին Բանկն իր գործունեության պատմության ընթացքում առաջին անգամ հանդես է եկել որպես պարտատոմսերի թողարկող և տեղաբաշխել է 10 մլն ԱՄՆ դոլար ընդհանուր անվանական ծավալով թվով 3 թողարկման պարտատոմս՝ երկու, երեք և հինգ տարի մարման ժամկետներով, համապատասխանաբար 7.5%, 8.0% և 8.5% արժեկտրոնային եկամտաբերությամբ: Ներկայումս Բանկի պարտատոմսերը ցուցակված են «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ ֆոնդային բորսայի “Bbond” հարթակում, իսկ պարտատոմսերի ամենօրյա երկկողմանի գնանշումը (մարքեթ մեյքինգ) իրականացնում է «Արմենբրոկ» ԲԲԸ-ն: Հաշվետու տարվա ընթացքում Բանկի կողմից թողարկված պարտատոմսերով ֆոնդային բորսայում իրականացվել է թվով 29 գործարք՝ 873,000 ԱՄՆ դոլար ընդհանուր անվանական արժեքով և 884,742.7 ԱՄՆ դոլար գնման գնով: Հարկ է նշել, որ Բանկի կողմից թողարկված կորպորատիվ պարտատոմսերը կազմում են կորպորատիվ արժեթղթերի առաջնային շուկայում իրականացված թողարկումների ավելի քան 52%-ը:

Corporate securities underwriting


During 2015 the Bank as Account operator continued both to attract new customers and to expand the range of products portfolio for existing clients. In 2015 the Bank signed registry maintenance agreements with 12 issuers (6 of which were on bond registry maintenance) and custody service contracts with 28 account holders.

In April 2015, for the first time in its history the Bank acted as issuer and issued bonds in amount of USD 10 million nominal value by 3 tranches with, two, three and five years maturity and respectively and 7.5%, 8.0% and 8.5% coupons. Now the Bank's Corporate Bonds are listed in “Nasdaq OMX” OJSC stock exchange “Bbond” section, and bonds bilateral daily quotations (market making) are implemented by “Armenbrok” OJSC.

During reporting year in stock exchange were carried out 29 transactions with bonds issued by the Bank with total nominal value of USD 873,000 and USD 884,742.7 purchase price. It is worth mentioning that the corporate bonds issued by the Bank constitute more than 52% of corporate securities issued in the primary market of RA.

Կորպորատիվ արժեթղթերի առաջնային տեղաբաշխումների ծավալներն ըստ թողարկողների

The volume of primary placement of corporate securities market by issuers



2015թ.-ի ընթացքում Բանկի կողմից կազմակերպված տեղաբաշխումներից բացի Բանկը շարունակել է իրականացնել շրջանառության մեջ գտնվող թողարկումների գծով մարումների և հերթական արժեկտրոնների վճարումների սպասարկումը: Մասնավորապես, իրականացվել են «Ազգային Հիփոթեքային Ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ-ի պարտատոմսերի ու «ԱՐՑԱՆ ՀԷԿ» ԲԲԸ-ի դոլարային պարտատոմսերի մարումները, որոնց ընթացքում Բանկն աջակցել է թողարկողներին և մատուցել հաշվարկային բանկային ծառայություններ:

2015թ.-ի ընթացքում Բանկը շարունակել է մատուցել նաև խորհրդատվական ծառայություններ իր կորպորատիվ հաճախորդներին՝ վերջիններիս կապիտալի կառուցվածքի, կորպորատիվ ռազմավարության, վերակազմակերպման և այլ հարցերի վերաբերյալ:

Դիլերային գործունեություն

2015թ.-ի ընթացքում Բանկը շարունակել է ակտիվորեն իրականացնել ՀՀ պետական և կորպորատիվ արժեթղթերով գործառնություններ ներքին ֆինանսական շուկայում: Այսպես, տարվա ընթացքում արժեթղթերի առաջնային շուկայում Բանկն

In 2015 apart from organised underwriting the Bank continued coupon payment and maturity service. Particularly during “National Mortgage Company” RCO CJSC’s bonds maturity and “ARTSAKH HEK” OJSC’s dollar bonds maturity the Bank supported the issuers and provided payment services

In 2015 the Bank also continued providing consultancy services to its corporate clients regarding capital structure, corporate strategy, restructuring and other issues.

Dealing activity

In 2015 the Bank continued to actively implement operations with RA government and corporate securities in the domestic financial market. During the reporting year the Bank’s operations in the primary market amounted to more than AMD 16.2 billion and in the secondary market to about AMD 28 billion in nominal value.

There was an increase in operations with corporate

իրականացրել է ավելի քան 16.2 մլրդ ՀՀ դրամ, իսկ երկրորդային շուկայում՝ ավելի քան 28 մլրդ ՀՀ դրամ անվանական արժեքով գործառնություններ: Սկստվել է կորպորատիվ արժեթղթերով գործարքների ծավալի աճ, ինչը պայմանավորված է գործող թողարկումներով, մասնավորապես, «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ-ում «ԱՐՑԱԽ ՅԷԿ» ԲԲԸ-ի բաժնետոմսերով իրականացված գործարքների ակտիվությամբ:

ՀՀ կորպորատիվ արժեթղթերի շուկայի զարգացմանը նպաստելու, ինչպես նաև «ԱՐՑԱԽ ՅԷԿ» ԲԲԸ-ի կողմից թողարկված բաժնետոմսերի ու «Ազգային Հիփոթեքային Ընկերություն» ՎԿԿ ՓԲԸ-ի կողմից թողարկված անվանական արժեկտրոնային պարտատոմսերի իրացվելիության մակարդակի բարձրացման նպատակով 2015թ.-ի ընթացքում Բանկն իրականացրել է «ԱՐՑԱԽ ՅԷԿ» ԲԲԸ-ի կողմից թողարկված բաժնետոմսերի և «Ազգային Հիփոթեքային Ընկերություն» ՎԿԿ ՓԲԸ-ի կողմից թողարկված անվանական արժեկտրոնային պարտատոմսերի երկկողմանի գնանշում՝ կնքելով 959,840 հատ բաժնետոմսերի (ավելի քան 1 մլրդ ՀՀ դրամի) և 3,946 հատ պարտատոմսերի (ավելի քան 56.6 մլն ՀՀ դրամի) առք ու վաճառքի գործարքներ:

2015թ.-ի ընթացքում Բանկն իր հաճախորդներին շարունակել է տրամադրել, ինչպես նաև այլ ֆինանսավարկային կազմակերպություններից ներգրավել դրամական միջոցներ՝ օգտագործելով ռեպո գործիքը, որի շրջանակներում իրականացված գործարքների ծավալը կազմել է շուրջ 866.5 մլրդ ՀՀ դրամ:

2015թ.-ի ընթացքում Բանկը, ներդրումային պորտֆելի համալրման նպատակով, պետական պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման աճուրդներից ձեռք է բերել ավելի քան 10.9 մլրդ ՀՀ դրամ անվանական արժեքով պետական պարտատոմսեր: 2015թ.-ին ՀՀ ֆինանսների նախարարության կողմից կազմակերպված հետզնումներին մասնակցության արդյունքում Բանկն անհամեմատ ավելի ակտիվ է գործել՝ վաճառելով մոտ 5.7 մլրդ ՀՀ դրամ անվանական արժեքով պարտատոմսեր (նախորդ տարվա 100 մլն ՀՀ դրամի համեմատ, ինչը պայմանավորված է եղել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տարվա սկզբին կազմակերպված հետզնումների քանակի կտրուկ ավելացմամբ): Երկրորդային շուկայում Բանկը վաճառել է ավելի քան 16 մլրդ ՀՀ դրամ և գնել ավելի քան 12 մլրդ ՀՀ դրամ անվանական արժեքով պարտատոմսեր: Արդյունքում, հաշվի առած նաև պարտատոմսերի մարումները, 2015թ.-ին Բանկի պետական պարտատոմսերի պորտֆելի անվանական ծավալն աճել է ավելի քան 2.8 մլրդ ՀՀ դրամով՝ կազմելով շուրջ 32.7 մլրդ ՀՀ դրամ:

2015թ.-ին պարտատոմսերի պորտֆելից Բանկի ստացած տոկոսային եկամուտը 2014թ.-ի համեմատ աճել է ավելի քան 8%-ով՝ կազմելով շուրջ 3.78 մլրդ ՀՀ դրամ, իսկ պարտատոմսերի առք ու վաճառքից ստացված զուտ եկամուտը՝ շուրջ 122.76 մլն ՀՀ դրամ: Հարկ է նշել, որ 2015թ.-ին Բանկը պահպանել է պետական պարտքի կառավարման գծով ՀՀ կառավարության գործակալի կարգավիճակը:

bonds explained by existing issuances particularly by active transactions with “ARTSAKH HEK” OJSC’s bonds in “NASDAQ OMX ARMENIA” OJSC.

To promote the development of the RA stock market, and to increase liquidity of “Artsakh HEK” OJSC’s shares and “National Mortgage Company” RCO CJSC’s nominal value bonds, in 2015 the Bank gave two-sided quotations for those shares and bonds implementing buy/sell transactions with about 959,840 shares (more than AMD 1 billion) and 3,946 bonds (for the amount of AMD 56.6 million).

In 2015 the Bank continued to allocate funds with its customers and attract funds from other financial organizations, using repo agreements. Overall amount of the mentioned instruments during the year was AMD 866.5 billion.

To increase its investment portfolio the Bank purchased government securities for a nominal value of AMD 10.9 billion from government securities initial allocation auctions in 2015.

During the RA Ministry of Finance’s securities repurchase in 2015 the Bank was more active and sold bonds with a nominal value of about AMD 5.7 billion compared to previous year’s AMD 100 million, which is due to increased amount of RA Ministry of Finance repurchases. In the secondary market the Bank sold bonds with a nominal value of more than AMD 16 billion and purchased bonds with nominal value of about AMD 12 billion. As a result taking also into consideration the volume of matured bonds, the Bank’s portfolio of government bonds increased by more than AMD 2.8 billion amounting to AMD 32.7 billion.


In 2015 the interest income on the bond portfolio increased by 8% as compared to 2014 results, amounting to AMD 3.78 billion. The net income of bought and sold bonds is amounted to about AMD 122.76 million. It is worth mentioning that in 2015 the Bank kept its status of state debt management agent of RA government.

Բանկի ներդրումային պորտֆելի կառուցվածքը և ստացված եկամտի դինամիկան ներկայացված է ստորև բերված գծապատկերում.

The structure of the Bank's investment portfolio and income dynamics is presented below:

Ներդրումային պորտֆելի կառուցվածքը և եկամտաբերության մակարդակը ըստ հաշվեկշռային արժեքի (մլն ՀՀ դրամ)

The Structure and Income Dynamics of the Bank's Investment Portfolio in book values (million AMD)



Տարվա ընթացքում Բանկը շարունակել է մասնակցել «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ-ում իրականացվող արտարժույթի առջ ու վաճառքի սակարկություններին, հանդես գալ միջբանկային և ներբանկային արտարժույթային շուկայում՝ միջազգային հիմնական փոխարկելի արժույթներով իրականացնելով շուրջ 158.9 մլրդ ՀՀ դրամի առջ ու վաճառքի գործառնություններ: 2015թ.-ին Բանկը շարունակել է կիրառել արտարժույթային սվոփ գործիքը, որի գծով հաշվետու տարվա ընթացքում միջբանկային շուկայում Բանկն իրականացրել է ավելի քան 33.4 մլրդ ՀՀ դրամ ընդհանուր ծավալով գործառնություններ՝ նախորդ տարվա ցուցանիշը գերազանցելով շուրջ 52%-ով:

During the reporting year the Bank continued participating in foreign currency biddings at "NASDAQ OMX ARMENIA" OJSC stock exchange, bought and sold currency of about AMD 158.9 billion with the main convertible currencies in the interbank Forex market. In 2015 the Bank continued to offer foreign currency swaps extensively, implementing transactions in the interbank market for around AMD 33.4 billion over-performing the previous year indicator by around 52%.

During the reporting year, the Bank also

Հատկանշական է նաև այն, որ հաշվետու տարվա ընթացքում Բանկն իր հաճախորդների հետ նույնպես իրականացրել է սվոփ գործարքներ, որոնց ծավալը 2015թ.-ի ընթացքում կազմել է շուրջ 1 մլրդ ՀՀ դրամ:

Չնայած շուկայում ձևավորված բարձր մրցակցության, ինչպես նաև տնտեսվարողների ակտիվության թուլացման արդյունքում 2015թ.-ին Բանկի կողմից կնքված ոսկու ձուլակտորներով գործառնությունների ծավալները նվազել են, այնուամենայնիվ, 2015թ.-ին ևս Բանկը շարունակել է պահպանել ՀՀ ֆինանսական համակարգի՝ այս ոլորտում ձեռք բերած իր կայուն դիրքը և ապահովել ՀՀ բանկային համակարգում նշված գործառնությունների գծով ծավալների զգալի մասը՝ իրականացնելով շուրջ 7.25 մլրդ ՀՀ դրամ ընդհանուր ծավալի թանկարժեք մետաղներով առք ու վաճառքի գործառնություններ: Բացի ձուլակտորների առք ու վաճառքից՝ 2015թ.-ին Բանկն իր հաճախորդներին շարունակել է մատուցել նաև առարկայազուրկ մետաղական հաշիվների բացման և վարման ծառայություններ՝ շուրջ 15.5 մլն ՀՀ դրամ ծավալով:

«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ն ՀՀ տարածքում գործող այն քիչ բանկերից է, որն իր պաշտոնական կայքէջում իրականացնում է ՀՀ դրամի և հիմնական արտարժույթների, ՀՀ պետական ու կորպորատիվ արժեթղթերի, արտարժույթային ֆորվարդային գործիքների, միջբանկային ավանդային և ռեպո գործառնությունների տոկոսադրույքների գնանշում Bloomberg և Reuters տեղեկատվական համակարգերի:

2015թ.-ին Բանկը շարունակել է ակտիվ գործունեություն ծավալել տեղական բանկերում տեղաբաշխելով և ներգրավելով վարկեր, ներդնելով ու ներգրավելով օվերնայթ դեպոզիտներ «ՆԱՍԴԱԶ ՕԷՄԷԲՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ-ի համապատասխան հարթակներում: Դեպոզիտների և վարկերի ընդհանուր ծավալը դրամային արտահայտությամբ կազմել է համապատասխանաբար 9.3 մլրդ և 80 մլրդ ՀՀ դրամ:

Բրոքերային գործունեություն

Բանկի ռազմավարական ուղղություններից է միջազգային չափանիշներին համապատասխան ներդրումային բանկային ծառայությունների, այդ թվում՝ արժեթղթերի շուկայում բրոքերային ծառայությունների մատուցումը: Բանկն իր բրոքերային գործունեության շրջանակներում հաճախորդներին առաջարկում է ներդրումային գործիքների բավականին լայն տեսականի՝ ամերիկյան, եվրոպական և ռուսական ընկերությունների բաժնետոմսեր ու դեպոզիտար ստացականներ, պետական և կորպորատիվ պարտատոմսեր, ապրանքային ու ֆինանսական ֆյուչերսներ և օպցիոններ, օտարերկրյա արժեթղթերով ռեպո գործառնություններ ու մարժինալ գործարքների կնքման հնարավորություն:

Հաշվետու տարվա ընթացքում Բանկի բրոքերային հաճախորդների թիվը 2014թ.-ի համեմատ աճել է մոտ 60%-ով: Գործարքներ են կնքվել ռուսական,

implemented swap transactions with its clients amounting about AMD 1 billion.

Despite the high competition in the market and droop of business activities led to the decrease of the volume of Bank's operations with gold, in 2015 the Bank continued maintaining strong positions in this area having a major market share in the RA banking system. The Bank implemented purchase and sell transactions with precious metals around AMD 7.25 billion which is the significant part of the total market.

It is worth mentioning that the Bank continued opening and serving non-physical metal accounts amounting to AMD 15.5 million.

ARMSWISSBANK is one of those rare banks in Armenia which provides quotations for AMD and main currencies, RA government and corporate securities, foreign currency forwards, interbank deposits and repurchase agreements at the official page of the Bank at Bloomberg and Reuters information systems.

In 2015 the Bank continued to work actively with local banks, attracting and allocating securities, loans, investing and attracting overnight deposits in appropriate platform of "NASDAQ OMX ARMENIA" OJSC. Overall deposits and loans amounted to AMD 9.3 billion and AMD 80 billion respectively.

Brokerage activities

Investment banking including brokerage services is considered one of the Bank's main strategic activities and is carried out in accordance with international standards. Within the scope of brokerage activities the Bank offers its clients a wide variety of investment instruments, such as shares and depository receipts of American, European and Russian companies, government and corporate securities, commodity futures, repo operations with foreign securities and marginal operations.

During the reporting year the number of the Bank's brokerage clients increased by about 60% compared to 2014. Transactions were executed with shares and depository receipts of leading companies at Russian, European and American stock exchanges and futures. The total number of brokerage transactions implemented upon the orders of the Bank's clients during 2015 was 414 for an amount of more than AMD 14.5 billion. Major part of this amount, namely AMD 7.5 billion is attributed to the brokerage transactions with foreign securities. It is worth mentioning that the total number of brokerage transactions of the

եվրոպական և ամերիկյան բորսաներում շրջանառվող առաջատար ընկերությունների բաժնետոմսերով, դեպոզիտար ստացականներով, ներդրումային ֆոնդերի փայերով ու ֆինանսական ֆյուչերսներով: Ընդհանուր առմամբ, 2015թ.-ի ընթացքում Բանկի հաճախորդների հանձնարարականների հիման վրա իրականացվել է թվով 414 բրոքերային գործարք՝ ավելի քան 14.50 մլրդ ՀՀ դրամին համարժեք ընդհանուր ծավալով, որից ավելի քան 7.50 մլրդ ՀՀ դրամը բաժին է ընկել օտարերկրյա արժեթղթերով իրականացված բրոքերային գործարքներին: Հարկ է նշել, որ հաշվետու տարվա ընթացքում կնքված բրոքերային գործարքների ընդհանուր ծավալը նախորդ տարվա համեմատ աճել է ավելի քան 4.4 անգամ, ինչը պայմանավորված է եղել ռուսական շուկաներում տատանողականության աճով, ռուբլու արժեզրկմամբ և շուկայում առաջացող շահութաբեր հնարավորություններին հաճախորդների կողմից առավել ակտիվ մասնակցություն ցուցաբերելու հանգամանքով:

2015թ.-ի ընթացքում Բանկը բավականին լուրջ դերակատարում է ունեցել նաև «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ-ի կորպորատիվ արժեթղթերի հարթակներում իրականացվող սակարկություններում՝ իր հաճախորդների հանձնարարականներով կնքելով շուրջ 7 մլրդ ՀՀ դրամի բրոքերային գործարքներ՝ նախորդ տարվա ցուցանիշը գերազանցելով ավելի քան 11 անգամ:

2015թ.-ին Բանկն իր հաճախորդներին օտարերկրյա արժեթղթեր ձեռք բերելու նպատակով շարունակել է տրամադրել լրացուցիչ ֆինանսավորում՝ մատուցելով օտարերկրյա արժեթղթերով մարժինալ և ռեպո գործարքների կնքման ծառայություններ:

Արդյունքում, ընթացիկ տարվա ընթացքում Բանկի հաճախորդներն իրականացրել են ավելի քան 779 մլն ՀՀ դրամ ընդհանուր ծավալով մարժինալ և ռեպո գործարքներ, ինչը նախորդ տարվա նույն ցուցանիշը գերազանցում է ավելի քան 29.5%-ով:

Հարկ է նշել, որ 2015թ.-ի ընթացքում Բանկը մասնակցել է «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիա» ԲԲԸ-ի կողմից կազմակերպվող «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիայի լավագույն անդամ 2015» ամենամյա մրցանակաբաշխությանը, որն անցկացվում է արդեն վեցերորդ տարին անընդմեջ, որի շրջանակում պարգևատրվում են բորսայի և դեպոզիտարիայի՝ տարվա ընթացքում առավել ակտիվություն դրսևորած անդամները: Այս տարի «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ն հաղթող է ճանաչվել «Բորսայի լավագույն անդամ կորպորատիվ արժեթղթերի շուկայում», «Կարգավորվող շուկայի հաշվարկային համակարգի լավագույն անդամ» անվանակարգերում և «Բորսայի լավագույն անդամ» գերանվանակարգում (գրան պրի):

Bank has increased by 4.4 times during 2015 in comparison to the previous year's indicator. This is the result of volatility in Russian market, the ruble devaluation and the desire of customers to participate in profitable opportunities arising in the market.

In 2015 the Bank also had active participation in the auctions at corporate securities platforms of the "NASDAQ OMX ARMENIA" OJSC executing AMD 7 billion brokerage transactions implemented upon the orders of the Bank's clients that was 11 times more than last year.

In 2015 the Bank continued repo agreements and marginal transactions with foreign securities which assumes additional financing to the clients to purchase securities.

As a result, the Bank's clients implemented marginal transactions for an amount of AMD 779 million during the year which 29.5% more than the same indicator in 2014.

It is worth mentioning that in 2015 the Bank took part in the annual award ceremony "Best Member of NASDAQ OMX Armenia 2015" organized by "NASDAQ OMX Armenia" OJSC, which has been held for the sixth year, in the scope of which the most active members of Exchange and depository are being awarded.

ARMSWISSBANK has won "Best Exchange Member in Corporate Securities Market", "Best Member of Regulated Market's Settlement System" categories and "Best Exchange Member" nomination (Grand Prix).







Մարքեթինգ

MARKETING

Բանկի մարքեթինգային քաղաքականությունը բխում է Բանկի հեռանկարային զարգացման ծրագրի հիմնադրույթներից և կոչված է նպաստել դրանում ամրագրված խնդիրների իրագործմանը: 2015թ.-ի ընթացքում Բանկը հանդես է եկել Բանկի ճանաչելիության շրջանակի ընդլայնմանն ուղղված տարբեր միջոցառումներով, այդ թվում՝ Բանկին առնչվող մի շարք միջոցառումների վերաբերյալ տեղեկատվության լուսաբանմամբ, հարցազրույցների կազմակերպմամբ, կոնֆերանսների մասնակցությամբ և հովանավորությամբ, պրոմո նյութերի տարածմամբ և այլն:

Հաշվետու ժամանակահատվածում շարունակվել է ակտիվ համագործակցությունը միջազգային կառույցների հետ. ընդլայնվել են միջազգային գործընկերների հետ արդեն իսկ ձևավորված հարաբերությունները, կնքվել են համագործակցության պայմանագրեր, ձեռք են բերվել պայմանավորվածություններ նոր ծրագրերում ընդգրկվելու վերաբերյալ, մասնավորապես.

- 2015թ.-ին ՎՋԵԲ-ի հետ կնքվել է նոր՝ 2 մլն ԱՄՆ դոլար գումարի չափով պայմանագիր՝ Էներգա-խնայողության ծրագրերի ֆինանսավորման նպատակով համագործակցություն սկսելու նպատակով:
- «Եվրոպական Ներդրումային Բանկ»-ի հետ կնքվել է Գյուղատնտեսության և զբոսաշրջության ոլորտում վարկային ծրագրերի շրջանակներում համագործակցության պայմանագիր:
- Բանկը սկսել է բանակցել «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ԾԻԳ» ՊՀ-ի հետ՝

Marketing policy stems from the provisions of the Bank's long-term strategic development plan and is meant to promote the objectives set out therein. During 2015 the bank has implemented various events aimed to promote the Bank's brand recognition; such as press coverage, arrangements of interviews, participation to the conferences and sponsorship, printing and distribution of promotional materials, etc..

During the reporting period the Bank continued active cooperation with international organizations, expanded already established relationships with international partners, signed cooperation agreements, several arrangements have been made to be included in new projects, particularly. In 2015 Bank signed new agreement with EBRD amounted USD 2 mln in the framework of energy efficiency program.

- Signed a cooperation agreement with European Investment Bank in the framework of Agriculture and Tourism loans
- In 2015, Bank took activities to join programs suggested by EFSE (European Fund for Southeast Europe) and GGF (Green

վերջինիս ծրագրերին միանալու ուղղությամբ:

· 2015թ.-ին աշխատանքներ են իրականացվել EFSE (European Fund for Southeast Europe) և GGF (Green for growth) հիմնադրամների հետ՝ իրենց կողմից առաջարկվող ծրագրերին միանալու ուղղությամբ:

Հատկանշական է նաև, որ «Հայաստանի արտահանման ապահովագրական գործակալություն» ԱՓԲԸ-ի հետ նախորդ տարվա վերջին սկիզբ դրած համագործակցության շրջանակներում Բանկի կողմից առաջինը ՀՀ բանկային համակարգում ֆինանսավորվել են որոշ հաճախորդների արտահանման գործարքներ:

2015թ.-ին Բանկի կողմից ակտիվ աշխատանքներ են իրականացվել նաև Բանկի սեփականատիրոջ՝ Վարտան Սիրմակեսի կողմից ձեռնարկված «Շիրակի մարզի տնտեսության զարգացմանն ուղղված ներդրումային ծրագրի» իրագործման նպատակով: Ծրագրի մանրամասները ներկայացնելու համար հանդիպումներ են տեղի ունեցել ինչպես ՀՀ Կառավարության ներկայացուցիչների և մարզի տեղական ինքնակառավարման մարմինների, այնպես էլ մի շարք պոտենցիալ հաճախորդների հետ: Ծրագրերի մի մասը գտնվում են ուսումնասիրման փուլում: Ավելին, տարվա վերջում տեքստիլի արտադրությամբ զբաղվող ընկերություններից մեկի կողմից ներկայացված ծրագրի համար իրականացվել է ֆինանսավորում:

2015թ.-ին Բանկը ձեռնամուխ է եղել ինտերնետային կայքի նորացման աշխատանքներին՝ հաճախորդների համար այն առավել պարզ և գրավիչ դարձնելու, ինչպես նաև ժամանակակից տեխնիկական պահանջներին համապատասխանեցնելու նպատակով:

Հաճախորդների սպասարկման որակի բարելավման նպատակով.

· մշակվել է «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի Հաճախորդների համար նախատեսված կայքին կից էլեկտրոնային պորտալը, որտեղ հաճախորդները հնարավորություն ունեն ներկայացնելու իրենց առաջարկներն ու առցանց դիմումները,

· ներդրվել է նոր՝ «ԶԱՆԳԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ» ծառայությունը, որի միջոցով հաճախորդներին տրամադրվում է տեղեկատվություն նրանց հաշիվների և քաղվածքների, ինչպես նաև Բանկի կողմից մատուցվող ծառայությունների ու սակագների վերաբերյալ:

Հաշվետու տարվա ընթացքում շարունակվել են աշխատանքները Բանկի նպատակային խմբերի հետ, որոնք ուղղված են եղել հաճախորդների կարիքների բացահայտմանը: Բանկում կիրառվող հաճախորդների ներգրավման և խաչաձև վաճառքների մեխանիզմները բարելավելու նպատակով վերանայվել են Բանկի վաճառքի քաղաքականությունը և ընթացակարգը: Նոր հաճախորդների ներգրավման նպատակով շարունակվել է «դիրեկտ մարքեթինգ»-ի արդյունավետ կիրառումը:

for growth) foundations.

· The Bank began to negotiate with IFAD to join suggested programs.

It is also worth mentioning, that in previous year the Bank first in the banking system financed some of its customers' export transactions in the framework of cooperation with Export Insurance Agency of Armenia (EIA).

In 2015 the Bank carried out different kinds of activities to implement the "Investment contributing to the development of Shirak region" program initiated by the Bank's owner Mr. Vartan Sirmakes. The details of the program were discussed with the representatives of Government and regional local authorities, as well as with several potential clients. Some other projects are at the stage of investigations.

In 2015, the Bank began the process of updating web site, make it more simple and attractive for customers, as well as make it more suitable to the modern technical requirements.

In order to improve the quality of customer service the Bank has developed:

· CRM electronic portal in Bank's webpage where customers will have opportunity to present their proposals and applications online, as well as

· The Bank introduced a new "Call Center" service, through which the Bank will provide information to its customers about their accounts and statements, as well as the Bank's services and tariffs.

During the reporting years the Bank carried out activities among the target groups of clients, which were directed to reveal the unrecognized needs of clients, ensure effective feedback, gradually introduce the private banking services, put into use new technologies during the provision of services, diversify the services provided to each client of the Bank. The Bank continued applying the efficient method of "direct marketing" to attract new clients.



Տեղեկատվական տեխնոլոգիաներ

INFORMATION TECHNOLOGIES AND SECURITY

Բանկը մշտապես կատարելագործում է ՏՏ ենթակառուցվածքները և, որպես իր կարևոր և շարունակական խնդիր, ապահովելու է տեղեկատվության ամբողջականությունը, ենթակառուցվածքների աշխատանքների անընդհատությունը, ինչպես նաև նոր համակարգերի ժամանակին տեղադրումն ու կիրառումը:

2015թ.-ին Բանկն իրականացրել է մի շարք միջոցառումներ անվտանգության բարձրացման նպատակով՝ առաջնորդվելով միջազգայնորեն ընդունված ISO 27001 ստանդարտով: Մասնավորապես, վերախմբավորվել են տեղեկատվական անվտանգությանը վերաբերող մի շարք ներքին ակտեր, վերանայվել են օգտագործողների իրավասությունները համակարգերում և վերահսկվել է դրանց տրամադրումը օգտագործողներին, մոնիտորինգի են ենթարկվել տեղեկատվական համակարգերը, կատարվել վերլուծություններ:

Կարևորելով բանկի ՏՏ ենթակառուցվածքի անխափան աշխատանքը և խափանումների կանխման (Disaster Recovery) պլանը՝ Բանկը նախագծել և շահագործման է հանձնել ՏՏ համակարգերի կրկնօրինակների ստեղծումը և ավտոմատ անցումը մեկից մյուսին (խափանումների դեպքում):

Բանկում կատարվել են մի շարք ավտոմատացման գործընթացներ, որոնք ուղղված են եղել մարդկային գործոնի ռիսկի նվազեցմանը: Սերվերների պահուստային աշխատանքի անխափանությունն ապահովելու նպատակով Բանկում առկա է երկու առանձին սերվերային սենյակ: Բանկն իր հաճախորդներին մատուցվող ծառայությունների անխափան աշխատանքն ապահովելու, ինչպես նաև Բանկի տվյալների հասանելիությունը բարձրացնելու նպատակով պահուստային սերվերային սենյակ ունի նաև ՀՀ կենտրոնական բանկի Դիլիջանի ուսումնական կենտրոնում:

The Bank always provides the continuity and consistency of all IT systems and infrastructures as well as promptly installs and applies new systems.

In 2015 the Bank implemented a number of activities to increase the security guided by the international ISO 27001 standards. Particularly, several internal regulations on information security were regrouped, the authorities of users were revised in system and monitored their provision to users, information technologies were monitored and research studies were conducted.

Prioritizing the uninterrupted operations and Disaster Recovery plan of IT infrastructure, the Bank has designed and commissioned the creation of duplicate IT systems and automatically switching from one to another in case of failure. It will increase the quality and accessibility of services provided by the Bank.

A number of operations in the Bank were automated aiming to reduce human factor risk.

The main result of the automation system is that it provides an online bank transfer to an alternate version.

2015թ.-ին Բանկում թարմացվել է ՀԾ-հնտերնետ-Բանկ համակարգը, որը հնարավորություն է տալիս Բանկի հաճախորդներին հեռահար սպասարկվել Բանկում: Այն թույլ է տալիս աշխարհի ցանկացած կետից, ցանկացած պահի ինտերնետի միջոցով, ապահով և անվտանգ օգտվել բանկային ծառայություններից՝ առանց Բանկ այցելելու: Ինտերնետ կայքի անվտանգությունն ապահովելու նպատակով տեղադրվել են միջազգային մեծ ձանաչում ունեցող VeriSign կազմակերպության սերտիֆիկատները: Առաջնորդվելով անվտանգության ժամանակակից պահանջներով՝ հատուկ ծրագրային ապահովմամբ կատարվում է կայքերի անվտանգության մոնիթորինգ, որը թույլ է տալիս ապահովել կայքերի անվտանգության բարձր աստիճան:

SS ոլորտում առկա զարգացումներին զուգընթաց՝ Բանկը 2015թ.-ին տեղադրել է նաև «Ինտերնետ Բանկինգ» համակարգի բջջային տարբերակը: Այն հնարավորություն է տալիս բջջային հեռախոսով օգտվել բանկային ծառայություններից: Տվյալ ծրագրային հավելվածներ առկա են համապատասխանաբար Play Market (Android) և iTunes (iOS) համակարգերում:

Բանկը շարունակելու է ընդլայնել առցանց «Բանկ-Հաճախորդ» համակարգի միջոցով մատուցվող ծառայությունները՝ համապատասխանեցնելով դրանք Բանկի և հաճախորդների պահանջներին, ինչպես նաև կատարելագործել «Ինտերնետ Բանկինգ» նոր համակարգը:

2015թ.-ին շահագործման է հանձնվել նաև Բանկի նոր կայքը: Այն համապատասխանում է ժամանակակից կայքերի պահանջներին՝ ապահովելով բջջային, պլանշետային և համակարգչային համապատասխան տարբերակները:

2016թ.-ին նախատեսվում է մի շարք փոփոխություններ իրականացնել Բանկի ներքին ցանցում և սերվերային համակարգերում՝ համապատասխանեցնելով դրանք միջազգային ստանդարտների կողմից հաստատված կառուցվածքին:

Հաճախորդների վերաբերյալ տեղեկատվության գաղտնիությունը, անվտանգությունը և ցանցային ռեսուրսներին օգտատերերի անվտանգ հասանելիությունն առավել ապահով դարձնելու նպատակով նախատեսվում է ներդնել Kaspersky Security-ի անվտանգության համակարգը:

Ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ 2016թ.-ի ընթացքում Բանկի առաջնային խնդիրներից է լինելու ռիսկերի նվազեցումը, որն իր մեջ ներառելու է SS բոլոր գործընթացները, սակայն հիմնական ուղղություններն են լինելու անձերի և համակարգերի փոխարինելիության ապահովումը ու տեղեկատվական տեխնոլոգիաների համապատասխանեցումը միջազգային ISO 27001 ստանդարտին ու դրա կիրառումը:

There are two separate server rooms at the Bank that ensure the continuity of the redundant servers work.

To ensure the continuity of operation provided to customers, as well as to increase the availability of data, the Bank also has redundant server room in Central Bank's education centre in Dilijan.

In 2015 the Bank updated the Internet Banking system, which enables the customers to be served at Bank distantly. It allows the customers to have safe and secured access to banking services from anywhere, anytime via Internet without visiting the Bank. To ensure the security of the Bank's web site the certificates of the globally recognized VeriSign Company have been acquired.

Led by the modern demands of security, monitoring of web sites is conducted with special software, which allows to increase the level of security of webpage.

Along with developments in IT sector, the Bank invested mobile version of "Internet Banking" system in 2015. It allows the customers to use banking services via mobile phones. The applications are available on Play Market (Android) and iTunes (iOS) systems.

The Bank will continue expanding the range of services provided by the "Bank-Client" system matching them to the needs of the Bank and its clients as well as improving the new "Internet Banking" system.

In 2015 the new website of Bank was launched. It meets the requirements of the modern web. It was structured to provide mobile, tablet and computer versions..

In 2016 the Bank plans to implement a number of changes in local network and server system matching it with confirmed structure of international standards.

Aiming to ensure the security of customers' confidential information and safety of secure access of network resources users, the Bank plans to switch to Kaspersky Security package.

As in the previous years, in 2016 risk mitigation will remain one of the primary objectives of the Bank which includes all IT procedures, however the main directions are the provision of interchangeability (of persons and systems) and correspondence of information technologies to international standards (COBIT, ISO 27001) and application thereof.







Ռիսկերի կառավարում

RISK MANAGEMENT

Բանկը մշտապես կարևորել է ռիսկերի արդյունավետ և անընդհատ կառավարումը: Բանկի Խորհուրդը, Տնօրինությունը, Գործադիր տնօրենը, ինչպես նաև Բանկի յուրաքանչյուր աշխատակից ընդգրկված են ռիսկերի կառավարման գործընթացներում: Ռիսկերի վերլուծությունը կազմում է Բանկի ռազմավարական պլանավորման գործընթացի, ինչպես նաև կարծաժամկետ ու միջնաժամկետ ծրագրերի գնահատման և ներդրման մի մասը:

Ռիսկերի կառավարման գործընթացը կանոնակարգում են Բանկի Խորհուրդը և Տնօրինությունը, որոնք որդեգրած քաղաքականության շրջանակներում հաստատում են սահմանաչափեր, ուղենիշներ, ներդրումային ուղեցույցներ, վարկառուների և գործընկերների ընտրության չափանիշներ, գրավների նկատմամբ պահանջներ և այլն, որոնք սահմանափակում են Բանկի վարկային, շուկայական, տոկոսային և այլ ռիսկերը: Բանկում գործում են խորհրդատվական և որոշումներ կայացնող կոլեգիալ մարմիններ՝ Տնօրինություն ու Վարկային, Ներդրումային, Ակտիվների և պարտավորությունների կառավարման, Գործունեության համապատասխանության հսկման ու Հաճախորդների հետ հարաբերությունների կառավարման կոմիտեներ:

Բանկն ունի Ռիսկերի կառավարման դեպարտամենտ, որը գործում է անկախ՝ գործարքներ իրականացնող ստորաբաժանումներից, իրականացնում է ընթացիկ և պարբերական հսկողություն Բանկի կողմից

The Bank's management has always prioritized the efficiency and consistency of risk management mechanisms. The Bank's Board, the Management Board, the Executive Director as well as each employee of the Bank are involved in the risk management process. Risk analysis is a vital component of the Bank's strategic planning process as well as the assessment and implementation of short and medium term projects.

The risk management process is regulated by the Board, which establishes limits, benchmarks, investment guidelines, criteria of selecting borrowers and partners, collateral requirements, etc., which reduce the Bank's exposure to credit, market and other risks.

Collective decision-making and consultative bodies operate in the Bank, namely, the Management Board, Credit, Investment, Assets and Liabilities Management, Compliance and Client Relations Management committees.

The Bank has a Risk Management Department which is independent from operational units and exercises daily and periodic control over the Bank's operations through examining higher risk transactions and monitoring the compliance with the internal normatives of the Bank as well as with the limits and benchmarks set by the Supervisory Board and the Management Board.

իրականացված գործառնությունների վրա՝ զսպելով առավել ռիսկային գործարքները, հետևելով Բանկի ներքին նորմատիվային դաշտին, Խորհրդի և Տնօրինության կողմից հաստատված սահմանաչափերին ու նպատակային ցուցանիշներին, ինչպես նաև իրականացնում է վարկային վերլուծությունների ստուգում և որակի հսկողություն:

Բանկում մշակված և ներդրված է բիզնես-մոդելի, վարկային, իրացվելիության, տոկոսադրույքի, արտարժույթի, գնային, գործառնական, համապատասխանության և համբավի ռիսկերի կառավարման արդյունավետ համակարգ՝ հիմնված ռիսկերի գնահատման ու զսպման ժամանակակից մեթոդների ու տեխնոլոգիաների վրա: Բանկը պարբերաբար վերանայում է ներդրումային ուղենիշների գործող ուղեցույցը, հաստատված սահմանաչափերը և վարկային ռիսկի գնահատման մեթոդական ուղեցույցները՝ դրանք համապատասխանեցնելով միջազգային և տեղական ֆինանսական շուկաներում տիրող իրավիճակին: Ռիսկերի ուսումնասիրության նպատակով Բանկը պարբերաբար կիրառում է սթրես-թեստերի մոդելներ: Արտարժույթային ռիսկը հեջավորվում է արտասահմանյան գործընկերների կողմից տրամադրվող գործիքակազմի միջոցով, ածանցյալ գործիքների համար սահմանվում են սահմանաչափեր՝ համաձայն Բանկում գործող կարգի: Տոկոսադրույքի ռիսկի գնահատման համար կիրառվում է տոկոսադրույքի ռիսկի կառավարման հիմնական տարրերից մեկը՝ ժամկետայնության ձեղքվածքի (GAP) մոդելը:

Գործառնական ռիսկերի կառավարման նպատակով պարբերաբար ուսումնասիրվում և բարելավվում են որոշումների կայացման ու վերահսկման գործընթացները: Հնարավոր կորուստները ծածկելու նպատակով Բանկը ձեռք է բերել ապահովագրական փաթեթներ (բանկային ռիսկերի համապարփակ ապահովագրություն (BBB) և գույքի ապահովագրություն):

Վարկային ռիսկի արդյունավետ կառավարման միջազգային փորձն ուսումնասիրելով, ինչպես նաև հաշվի առնելով նաև վարկավորման գործընթացների վերաբերյալ Բանկի հետ համագործակցող միջազգային ֆինանսական կառույցների առաջարկությունները, 2015թ.-ին Բանկի ռիսկերի կառավարման ստորաբաժանման կառուցվածքում ներդրվել է վարկային ռիսկի կառավարման լրացուցիչ նոր գործառնույթ՝ վարկային ռիսկի կառավարչի առանձնացված հաստիքներով: Նշված գործառնույթի նպատակը՝ նախքան վարկային կոմիտեի քննարկմանը ներկայացնելը վարկային հայտերը վերլուծող ստորաբաժանումների վերլուծական փաթեթների անկախ գնահատումն ու վարկային ռիսկի կառավարման արդյունավետության բարձրացումն է:

Իրավական ռիսկի կառավարման համար Բանկում գործում է համապատասխանության (compliance) գործառնույթն իրականացնող կոմիտե, որն արագ արձագանքում է բանկային համակարգում տեղի ունեցող իրավական և այլ փոփոխություններին ու տեղեկացնում է այդ մասին Բանկի ղեկավարությանն ու համապատասխան ստորաբաժանումներին:

The department also implements monitoring of credit instruments as well as quality control.

An effective system of credit, price, interest rate, foreign currency, liquidity and operational, reconciliation as well as reputation risk management is applied in the Bank based on modern methods and technologies of risk assessment and mitigation. The Bank periodically reviews the existing guidelines of investment benchmarks, approved limits and credit risk assessment guidelines adjusting them to the situation of local and international financial markets. Stress test models are periodically exercised for observing the risks typical of the Bank. The instruments available from foreign partners are used to hedge the foreign currency risk and limits are defined for derivatives according to the regulation enforced in the Bank. One of the key elements of interest rate risk management, namely the maturity GAP model, is applied for the assessment of interest rate risk.

For the purpose of managing operational risk, decision making and control procedures are periodically studied and improved. To cover possible losses the Bank has acquired insurance packages, namely, the BBB (Bankers Blanket Bond) and Building and Property insurance policies.

Examining the modern international experience of effective credit risk management and taking into consideration the suggestions of international financial institutions cooperating with bank, in 2015 a new position of credit risk manager was formed in Risk Management Division. The main function of this positions are independent evaluation of financial analysis before presenting credit applications to the Credit Committee as well as to improve efficiency of credit risk management.

To manage legal risks a committee ensuring the compliance function operates in the Bank which quickly responds to legal and other changes in the banking sector and immediately informs the Bank's management and relevant units.



Ներքին հսկողություն եվ աուդիտ

INTERNAL AUDIT

Բանկի Ներքին աուդիտի ստորաբաժանումն իրականացնում է Բանկի գործունեության ոլորտներում առկա ռիսկերի նվազեցման և/կամ կանխարգելման նպատակով ձևավորված ներքին հսկողության մեխանիզմների բավարարության և արդյունավետության գնահատում: Ներքին աուդիտի ստորաբաժանման կողմից իրականացվում է նաև Բանկի գործունեության` Հայաստանի Հանրապետության օրենքների, ՀՀ կենտրոնական բանկի և Բանկի ներքին իրավական ակտերի պահանջներին համապատասխանության ստուգում:

Ներքին աուդիտի ստորաբաժանումն իրականացնում է ինչպես ներքին աուդիտի ծրագրային միջոցառումներ Բանկի խորհրդի կողմից հաստատված Ներքին աուդիտի տարեկան աշխատանքային ծրագրի հիման վրա, այնպես էլ արտածրագրային միջոցառումներ` իր նախաձեռնությամբ:

Ներքին աուդիտի ստորաբաժանման կողմից 2015թ.-ի ընթացքում ամբողջությամբ իրականացվել են Բանկի խորհրդի կողմից հաստատված ծրագրային միջոցառումները:

Ներքին աուդիտի ստորաբաժանումն իր գործունեության ընթացքում ակտիվորեն համագործակցում է Բանկի խորհրդի կողմից ստեղծված և նրան հաշվետու Աուդիտ կոմիտեի, Բանկի Տնօրինության, Գործադիր տնօրենի և կառուցվածքային ստորաբաժանումների հետ, մասնավորապես` 2015թ.-ի ընթացքում

The Internal Audit evaluates whether the internal control mechanisms for the reduction and prevention of the risks related to the Bank's activity are sufficient and effective as well as monitors the compliance of the Bank's activity to the RA legislation, legal requirements of the CBA and internal regulations of the Bank.

The Internal Audit both carries out planned examinations according to its annual work plan approved by the Bank's Board and initiates examinations at its own direction.

In 2015 the Internal Audit has completed all of the planned activities approved by the Bank's Board.

During its activities the internal audit department actively cooperated with the Audit Committee, which is created by the Board of the Bank and is reporting to them, with Directorate, Executive Directorate with structural departments. Particularly



Բանկում գումարվել է Աուդիտ կոմիտեի 7 նիստ, որոնցում քննարկման են դրվել Ներքին աուդիտի ստորաբաժանման կողմից կատարված բոլոր առաջարկությունները և կազմված հաշվետվությունները, ինչպես նաև առաջարկությունների կատարման ուղղությամբ Բանկի Տնօրինության կողմից ձեռնարկված միջոցառումները:

2016թ.-ի ընթացքում Համապատասխանության ապահովման բաժնի կողմից շարունակվելու են իրականացվել ուսումնասիրություններ և ստուգումներ՝ ուղղված Բանկում համապատասխանության ռիսկ պարունակող գործընթացների ու ոլորտների բացահայտմանը: Համապատասխանության ռիսկի կառավարման և նվազեցման տեսանկյունից Բանկում կարևորվում է էթիկայի կորպորատիվ մշակույթի ձևավորման խրախուսումն ու աջակցումը, որն արժեքավորում է պատասխանատու վարվելակերպը և աշխատակիցների գործունեության համապատասխանությունը օրենքների և այլ իրավական ակտերի, ներառյալ Բանկի ներքին իրավական ակտերի պահանջներին: Այդ նպատակով նախատեսվում է Բանկի կորպորատիվ արժեքները ներկայացնող վարքագծի կանոնների վերաբերյալ սեմինարների և քննարկումների կազմակերպումը՝ նպատակ ունենալով խրախուսել բարձր պրոֆեսիոնալիզմը և սահմանել աշխատակիցներից պահանջվող վարքագիծը:

Բանկը միջազգայնորեն ընդունված սկզբունքներով իրականացնում է պայքար փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ՝ համակողմանիորեն ուսումնասիրելով հաճախորդներին, գործընկերներին և շահառուներին: Բանկը 2014թ.-ի ընթացքում միացել է 01.07.2014թ.-ից ուժի մեջ մտած «Օտարերկրյա հարկային հաշիվների համապատասխանության մասին» ԱՄՆ օրենքի (FATCA) պահանջներին, ընդգրկվել է ԱՄՆ հարկային պետական ծառայության (IRS) հետ համագործակցող օտարերկրյա ֆինանսական կազմակերպությունների ցանկում ու շարունակում է գործել՝ համաձայն նշված օրենքի սկզբունքների:

Կարևորելով փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի գործառնությունը՝ Բանկը շարունակելու է զարգացնել ու բարելավել իրականացվող գործողություններն այս ոլորտում՝ ապահովելով օրենսդրական դաշտի պահանջները: Շարունակվելու են իրականացվել ներքին սեմինարներ ՓԼԱՖ կանխարգելման թեմայով՝ ապահովելով Բանկի աշխատակիցների իրազեկվածությունը ներքին և օրենսդրական ակտերին:

in 2015 Bank's Audit Committee met seven times. During the mentioned meetings were discussed all recommendations given by Internal Audit, as well as actions carried out by the Bank's Directorate.

During 2016 the Compliance department will continue to carry out researches and inspections aiming to detect the processes and areas that contain compliance risk. For managing and reducing compliance risk the Bank values the formation of ethical corporate culture that values the responsible behavior of employees and compliance with laws and regulations, including the Bank's internal regulations. For this purpose it is planned to organize seminars and discussions about Bank's corporate behaviors aiming to encourage high professionalism of the staff and define their required behavior.

The Bank implements detailed examination of its clients, partners and beneficiaries within the framework of its Anti-Money Laundering and Counter-Terrorism Financing policy based on international standards. In 2014 the Bank joined FATCA – (Foreign Account Tax Compliance Act) law, which came into force as of 01.07.2014. At the same time the Bank has involved in the list of foreign financial institutions, which cooperate with US Internal Revenue Service (IRS).

Prioritizing fighting against Money Laundering and Terrorism financing the Bank will continue developing and improving activities in this sphere ensuring legislative requirements. Internal seminars on Money Laundering and Terrorism financing will be continued to ensure employees' awareness of internal and legal regulations.





ԱՆՃՆԱԿԱԳՄԻ Կառավարման քաղաքականություն

HUMAN RESOURCE MANAGEMENT

Բանկի Մարդկային ռեսուրսների կառավարման առաջնահերթ ուղղություններից են համարվում բանիմաց, որակյալ և փորձառու մասնագետների ներգրավումն ու ինտեգրումը ընդհանուր միջավայրին, աշխատակիցների շարունակական վերապատրաստումը, կորպորատիվ մշակույթի տարածումն ու առողջ թիմի պահպանումը: Բանկի աշխատակիցներն աչքի են ընկնում իրենց հմտություններով, պրոֆեսիոնալիզմով և թիմային աշխատանք իրականացնելու ունակություններով:

2015թ.-ին ևս Բանկի կողմից կարևորվել են աշխատակիցների ուսուցման, վերապատրաստման և որակավորման բարձրացմանն ուղղված միջոցառումները: Բանկի 50 աշխատակից մասնակցել է 34 սեմինարների, պրեզենտացիաների, կոնֆերանսների 33 տարածքում, արտասահման է գործուղվել 4 աշխատակից՝ մասնակցելու արտասահմանյան կոնֆերանսների և վերապատրաստումների, ինչպես նաև կազմակերպվել է 38 ներքին սեմինար:

Հունվարին ՎՋԵԲ-ի խորհրդատուի կողմից Բանկում անցկացվել է Ֆակտորինգային ռիսկերի վերաբերյալ սեմինար, որին մասնակցել է 23 աշխատակից, որոնց բոլորին շնորհվել են հավաստագրեր: Շարունակվել է նաև ACCA որակավորման քննությունների հաջորդական փուլերին աշխատակիցների մասնակցության գործընթացի կազմակերպումը: Տարվա ընթացքում 2 աշխատակցի շնորհվել է ACCA հերթական որակավորումներ: Բացի այդ, Բանկի 1 աշխատակցի շնորհվել է CFA (Chartered Financial Analyst) level 2

Some of the most important directions of the human resource management policy are the recruitment and retaining of experienced, stand alone and visionary staff members, continuous trainings and overall development of employees, high understanding of corporate culture and the spirit of team working. The employees of our Bank stand out for their skills, professionalism and ability to perform effective teamwork.

